ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<12>> դեկտեմբերի 2016 թվականի N: 102 ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթով և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1/15.1/5399-16 հանձնարարականը.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում իրականացնել 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա անասունների համատարած հաշվառում:
2. Հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում կատարելու նպատակով ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա անասունների հաշվառման աշխատանքներին աջակցող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի համայնքների ղեկավարներին և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության տնօրենին՝
   1) 2017 թվականի հունվարի 1-ից 17-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել գյուղատնտեսական կենդանիների հաշվառումը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Շիրակի մարզի տարածաշրջանային բաժիններին,
   2) հաշվառման աշխատանքների իրականացման ժամանակահատվածում մասնակից դարձնել համայնքը սպասարկող անասնաբույժ մասնագետներին:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Հարություն Արշակյանին:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի

ԹԻՎ 102 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Մանուկյան Մովսես	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ, հանձնաժողովի նախագահ,
Մարգարյան Աննա	Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության Շիրակի մարզային գործակալության պետ, անդամ /համաձայնությամբ/,
Նալբանդյան Անդրանիկ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ, անդամ,
Պողոսյան Սիմոն	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության Շիրակի մարզային կենտրոնի տնօրեն, անդամ /համաձայնությամբ/,
Ասլանյան Ջիվան	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության աջակցության Շիրակի մարզային կենտրոնի տնօրեն,
Պետրոսյան Վարդան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
Անանիկյան Տիգրան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
Ավետիսյան Սուրեն	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, անդամ,
Սերոբյան Վանիկ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ, անդամ,
Վարձելյան Արամ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի առաջին կարգի մասնագետ, անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ԽՍ. ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է